ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐԵՐԱՐ ՊԱՐՈՆ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՊԱՐՈՆ ՆՈՒՊԱՐ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻՆ

ՓԱՐԻԶ

Խորը վշտով իմացանք Մայր Աթոռ Ս. էջմիածնի բարերար պարոն Գալուստ Կյուլպենկյանի ցավալի մահը: Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և անձամբ իմ անունից հայտնում ենք մեր խորը ցավակցությունները անդարձ կորստի համար: Աղոթում ենք Աստուծուն՝ հանգուցյալի հոգու փրկության և հանգստի համար: Թող Հոգին Սուրբ մխիթարի հանգուցյալի սգակիր ընտանիքին և բարեկամներին: Օգոստոսի 7-ի կիրակին մատուցելու ենք հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ:

Օրհնությամբ՝

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

3 օգոստոսի 1955 թ., էջմիածին:

ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

ՆԻՑՑԱ

Հայտնում ենք մեր խորը ցավակցությունները Մայր Աթոռի բարերար պարոն Գալուստ Կյուլպենկյանի ցավալի մահվան առթիվ: Օգոստոսի 7-ին Մայր Տաճարում մատուցվելու է հոգեհանգստյան պատարագ: Խնդրում ենք մխիթարել հանգուցյալի ընտանիքի անդամներին Մայր Աթոռի անունից:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

3 օգոստոսի 1955 թ., էջմիածին:

ԳԵՐԱՇՆՈՐՀ ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հանուն իմ և ամբողջ ընտանիքիս հայտնում եմ, որ շատ զգածված ենք Ձեր համակրանքից, վշտակցությունից և աղոթքներից: Խնդրում եմ ընդունել մեծարանքս և անկեղծ շնորհակալություններս անձամբ Ձեր և Գերագույն Հոգևոր Խորհրդի այն բարյացակամ բարեպաշտիկ մտածման համար, ըստ որում հանդիսավոր պատարագ և հոգեհանգստյան պաշտոն է կատարվել իմ սիրելի հոր հոգու հանգստյան և փրկության համար:

ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

12 օգոստոսի 1955 թ., Փարիզ: